Հաշվետվություն
2018թ. մարտի 27-ից 29-ը Ռուսասատանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաք գործուղման վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Արթուր Խաչիկյան:

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները

2018 թվականի մարտի 28-ից 29-ը՝ Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաք:

4. Հրավիրող կողմը

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի պատասխանատու քարտուղար Պ. Պ. Ռյաբուխինի 02.02.2018թ. N251/78 հրավեր(Հայաստանի Հանրապետության վարչապետի 30.03.2018թ. N319-Ա որոշում):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի միջոցառումներին և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդին կից Փորձագիտական-խորհրդատվական խորհրդի հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի հաստատմանը ներկայացվող որոշումների ընդունման նպատակով քննարկվել են՝

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովին կից Փորձագիտական-խորհրդատվական խորհրդի հերթական նիստի նյութերը.
- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի մշտական հանձնաժողովների նիստերի նյութերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մասնակցել եմ՝

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի Տեղեկատվական-վերլուծական իրավական կենտրոնի նիստին.

- Վթարափրկարարական ծառայությունների գործունեությունը և փրկարարի կարգավիճակը կանոնակարգող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների օրենսդրության ներդաշնակեցման վերաբերյալ առաջարկություններ մշակող աշխատանքային խմբի նիստին.

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդին կից Փորձագիտական-խորհրդատվական խորհրդի հերթական նիստին.

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի սոցիալ-տնտեսական և իրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի Տեղեկատվական-վերլուծական իրավական կենտրոնի նիստում ներկայացվել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդին կից Փորձագիտական-խորհրդատվական խորհրդի կողմից իրավական ակտերի մշակման, ընդունման և այլ աշխատանքների վերաբերյալ վերլուծությունը.

- Վթարափրկարարական ծառայությունների գործունեությունը և փրկարարի կարգավիճակը կանոնակարգող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների օրենսդրության ներդաշնակեցման վերաբերյալ առաջարկություններ մշակող աշխատանքային խմբի նիստում հաստատեցինք Առաջարկությունների վերջնական տարբերակը և ներկայացրեցինք Փորձագիտական-խորհրդատվական խորհրդին՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների քննարկմանը ներկայացնելու նպատակով (միաժամանակ առաջարկվեց ուշադրություն դարձնել և անհրաժեշտության դեպքում

ներառել ծառայությունների հետագա զարգացման ու նորագույն տեխնոլոգիաների կիրառման խնդիրները և հարցերը).

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդին կից Փորձագիտական-խորհրդատվական խորհրդի հերթական նիստում քննարկվեց թվով 15 որոշում, որից ընդունվեց թվով 9-ը, թվով 3-ն ուղարկվեց լրամշակման, թվով 3-ը տեղափոխվեց Փորձագիտական-խորհրդատվական խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը.

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի սոցիալ-տնտեսական և իրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում քննարկվեցին Փորձագիտական-խորհրդատվական խորհրդից Խորհրդարանական վեհաժողով ներկայացված փաստաթղթերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Սույն հաշվետվության 8-րդ կետում թվարկված փաստաթղթերը, նիստերի նյութերը և որոշումները լրամշակելուց հետո պաշտոնապես Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրներին կուղարվեն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի քարտուղարության կողմից:

10. Գործուղվողը

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Արթուր Խաչիկյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը 05.04.2018թ.